

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

372.21

7-98

ՇՈՒՅՑ

ՄԱՆԿԱ



ԴՐԱՊԱՐԱ

372.21

7-98W

4 APR 2013

E - MAR 2010

Հ. Ա. Խ. Հ. Պ Ի Ս Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

Սոցգասզիխարշություն

Հ. 9 Մանկավարժական հանրամատչելի գրադարան Հ. 9

Ա. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՆԵՐԸ
ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

16136
-004

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՆԵՐԸ

ՏԵՐԵՎԱՆ - 1928



**ԳԵՂՋԱԿՈՒՀԻՆ ՅԵՎ ՄԱՆԿԱՐԱՊԱՐԱԿԸ
ԳՅՈՒՂՈՒՄ**

«Գյուղի յերեխան ծիծաղել չգիտի, չի խոսում, լուակցաց ե, սիրում ե ինքն իրենով զբաղվել», — այսպիսի կարծիքներ մենք հաճախ ենք լսում այն ընկերներից, վորոնք մեկ-յերկու ամառ աշխատել են գյուղերում, մանկական հրապարակներում:

Մյուս կողմից մենք տեսնում ենք, վոր գյուղական մանուկը վատառողջ ե, հաճախ ե հիվանդանում, չի իմանում իր սովորական կարիքները հոգալ, չգիտի կանոնավոր ուտել, մաքրության հետեւել, պահպանել իր առողջությունը:

Դյուղում գեռուժեղ են մնահավատությունները, վախը, պառավական առասպեկներն ու խրատները. յերեխան ամեն մի քայլափոխում լսում ե սուա ու վուտ բացատրություններ, սխալ մեկնաբանություններ. ապրելով բնության մեջ՝ նա չի ճանաչում այդ բնությունը, նրա յերեսովմները, չի սուսպում բնության բարիքներից, չի վայելում բնության գեղեցկությունը. ինչո՞ւ յե այսպես:

Կարծում ենք բոլորի համար ել պարզ ե, վոր այստեղ վհչ թե գյուղի յերեխան ե մեղավոր

կամ վոր այդ յերեխան ուրիշ կերպ չի կարող լինել, այլ մեղավոր ենք մենք մեծերս, ավելի ճիշտ՝ ընդհանուր պայմանները, մեր աղքատությունը, հետամնացությունը և այն, վոր գեռ ևս մեր մեջ թույլ ե ինքնագործունելությունը, հասարակական նախաձեռնությունը, մենք գեռես չենք կարողացել մեր վրայից լիովին թափանց ինսցաղի ու բարքերի մնացորդները, դեռ չի հաջողվել վայելուչ, հետաքրքիր ու կուլտուրական կյանք ստեղծել զյուղում. այդ ուղղությամբ աշխատում են Խորհրդ, իշխանությունը, կոմմունիստական կուսակցությունը, կին-բաժինները, դպրոցը, կոոպերացիան, կոմսոմոլն ու պիոները. շատ բան հաջողվել ե մեզ այս 8—10 տարվա ընթացքում, բայց ավելի շատ բան դեռևս մնում է անելու առաջիկայում:

Այս գրքուկում մենք կանգ կառնենք միայն մի խնդրի վրա. թե ինչպես կարելի յե դաստիարակել յերեխային զյուղում, ամառը, մանկական նրապարակներում և ինչ նշանակություն ունի մանկական հրապարակը թե յերեխայի և թե մոր, աշխատավոր գեղջկունու համար:

Սկզբում, յերբ մեզ մոտ նոր եր յանկական րապարակը, զյուղում շատ թերահավատությամբ ելին նայում նրա վրա, չելին հավատում, վոր հրապարակի միջոցով կարելի յե աղատագրել

գեղջկունուն, նպաստել մանկան առողջացման ու նոր վոգով դաստիարակել նրան:

«Են, միայն թե կուշալինեն յերեխաները».

«Մաքրությունն ու դաստիարակությունը քաղաքացուն ե վայել»:

«Յերեխա յե-թող խաղա. ինչ հրապարակ, ինչ աշխատանք»:

«Մեր որն ես ե. կեղտոտ ենք, չքավոր. եսպես ել կմեռնենք» և այն, և այն—այսպիսի վերաբերմունք գեղջկունիների կողմից տեսնելը շատ սովորական մի բան եր:

Բայց հենց առաջին որերը գեղջկունիներն հենց իրենք տարվում ելին հրապարակներով. հիանում ելին՝ ինչպես իրենց փոքրիկներն այնտեղ խաղում են, յերգում, աշխատում. իրար հետ լավ են վարվում, միացած ուժերով հոգում են իրենց ընդհանուր կարիքները, իսկ տուն դալիս ուրախ ճավառում են, նոր յերգեր, նոր սովորութներ են բերում:

«Թեթև հագուստ (արուսիկ) են պահանջում»:

«Մապոն են ուզում, վոր լվացվեն, պահանջ են գնում մազերը խուզել»:

«Տուն դալիս բարեւում են, գնալիս ցտեսություն են ասում»:

«Յեթե թաշկինակը մոռացել ե, յետ ե գա-

լիս հրապարակից.—ամաչում ե յերեալ առանց
թաշկինակի, գոզնոցի»:

Այս ե մեր ուղածը. գյուղը սովորի մաքուր,
վայելուչ կյանքի:

«Ինչքան շատ ե սապոն գործածում մի յեր-
կիր, այնքան նա կուլտուրական ե, այնքան բա-
րեկեցիկ ե նրա կյանքը», սա սովորական մի
դարձվածք ե մեզ համար:

«Կուլտուրական կյանքի չափանիշներից
մեկն ե զուղում թաշկինակների գործածությունը,
ըիթ որբելը, լվացվելը, իր անձնական խնամքը»,—
առում ե մեր մեծ ընկերներից մեկը, Կրուպսկա-
յան:

Բայց մեր անելիքը սրանով չի վերջանալու.
կուլտուրական կյանքի հետ միասին մեզ հարկավոր
ե, զոր յերեխան ապրի ժամանակակից հեղա-
փոխական կյանքով, մասնակցի մեր ընդհանուր
շինարարության գործին, պատրաստվի ապագա
կոմմունիստական կյանքի (պայքանը) համար:

Չե վոր հեղափոխական շինարարության մաս-
նակից են նաև յերեխաները. ժողովրդական առածն
առում ե՝ «ծառն իր պտղից ե ճանաչվում».
պետք ե մանկությունից կադմակերպել յերեխայի
կյանքը, մացնել նրա մեջ կոլեկտիվիստական
սովորութներ, աշխատանքային դաստիարակու-
թյուն տալ նրան, սովորեցնել դիտել կյանքը,

ուսումնասիրել այն, մատնակցել շրջապատող
կյանքին:

Այս աշխատանքն ոկտելու յե շատ վաղ. քանի
փոքր ե յերեխան, այնքան ավելի հեշտ է նրան
դաստիարակել, այնքան ավելի յե նա լուրացնում
տեսածն ու լածը, ընդորինակում ե ու նուան-
վում մեծերին. ահա թե ինչու անհրաժեշտ ե
մանկական հրապարակը գյուղում 3, 4, 5 մինչև
անգամ 6—8 ա. յերեխաների համար, վորոնք
հեշտությամբ են յենթարկվում դաստիարակչա-
կան ազգեցության:

Սակայն չպետք ե մոռանալ, վոր այս հա-
սակն ուշադիր վերաբերմունք, խնամք ու զգուշ
դաստիարակություն ե պահանջում: Այս շրջանի
ազգութիւնները խոր ազգեցություն են թողնում
մանկան վրա. ով չի հիշում, թե ինչպես իր
մանկության մի դեպք, մի մեծ ուրախություն
(նվեր, ճանապարհորդություն, տոն և այլն) կամ
մի մեծ վիշտ (ծեծ, հարազատների մահ, սովա-
ծություն և այն) ընդ միշտ ապագորվում ե,
կյանքի հետագա աարիներում հաճույք, կենսու-
րախություն կամ ընդհակառակը՝ կսկիծ, ափո-
սանք ու վրիժառություն առաջացնելով: Յեթե
յերեխան այդ հասակում ապրել ե մենակ, առանց
ընկերների մեծանալով—մեծ մասամբ լուակաց
ու մենասեր ե դառնում, Այս հասակում յերե-

խային պետք ե տալ ուրախություն, հետարքիր
ու բովանդակութի զարձնել նրա կյանքը՝ խաղն ու
աշխատանքը:

Սակայն այս բոլորը չի կալող տալ ընտա-
նիքը. այն ել զյուղում, մանավանդ ամառը, յերբ
գյուղացու համար ապրել մեռնելու խնդիր ե
դրված:

Նեղ խրճիթ, ողի ու լույսի կարոտ, մեծելն
զբաղված են, փոքրիկները խանգամում են իրենց
պահանջներով ու աղմուկով, վոտի տակ ընկնում,
ջղայնանում են իրենք, ջղայնացնում են մեծերին
և վերջն ել պատժվում, ծեծվում կամ իրենց
բախտին են մնում.—Ժամանակին չեն ուտում,
անկողինը չեն մաքրում, շորերը չեն լվանում,
քունն անկանոն, հիվանդ, մաշված—հացը միշտ
բերանին, սակայն արցունքը միշտ աչքերին:

Այս բոլորը կարող ե վերացնել մանկական
հիմնարկը—մտուրը, կոնսուլտացիան, մանկական
հրապարակն ու մանկապարտեզը:

Կանդ առնենք առայժմա մանկական հրա-
պարակի վրա:

Սա մի տեղ ե, վորտեղ ուշ գարնան կամ
ամռան ամիսներին հավաքվում են գյուղի փոք-
րահասակ յերեխաները և աշխատում ու խաղում
մեծերի՝ զեկուվարների (գարժուհու) հսկողու-
թյամբ:

Շատ ու շատ ոգուտնեի ե տալիս մանկա-
կան հրապարակը:

1. Թեթևացնում ե գյուղացու՝ մեծ մաս սմբ-
մոր՝ լրությունը:

2. Բարձրացնում ե նրա աշխատանիքի ար-
դյունիքը (արագը ողականությունը):

3. Յերեխաներին ազատում ե բազմաթիվ
վտանգներից, քաղցից, պատիժներից:

4. Ողի, ջրի, արեի, կազմակերպված սննդի
(ճաշ, նախաճաշ) միջոցով առողջացնում ե
զյուղի մանկան:

5. Կրթում, դասիարակում ե յերեխային
ծանոթացնում կյանքին, զրջապատին ու պատ-
րաստում առաջիկա կյանքի համար (դպրոցում,
անտեսության մեջ):

6. Յերեխաների, հիմնարկի ու զեկավար-
ների ազդեցության շնորհիվ փոխում ե կեն-
ցալը, նոր ու առողջ սովորույթներ՝ մտցնելով.
հալածում ե մանավատություն, վախը, առաս-
պելները:

7. Մանկապարտեզի վերածվելով, նա հնա-
րավորություն ե տալիս գեղջկուհուն ազատ ժա-
մերին ացելելու խրճիթ ընթերցարան, ժողով,
հանդեսներ և այլն, խելացի կերպով ոգտագոր-
ծելու ժամանցը և ուժը ներածի չափ մտանակ-
ցելու հասարակական կյանքին:

Յեկ գյուղը, զեղջկուհին արդեն դդացել եմանկական հրապարակի արժեքն ու գերը՝ համարյա մեր բոլոր գավառներում անցնող ամառ, հրապարակները փակելիս թե՛ յերեխաները և թե նրանց ծնողները շվարած հարցնում եյին՝ «բամենք ինչ ենք անելու. վոր գնաք՝ ելի՞ կդաք»... շատ աեղերում արցունքով ելին բաժանվում դեկավարներից, այնքան կապվել եին հրապարակների հետ:

Մի փոքրիկ ակնարկ յեթե զցենք՝ ըստարակների վրա, կհաճոզվենք ուս բանում. 1925 թ. ամառը Հայտստանում կային ընդամենը 3 քաղաքարակ, 1926 թ. դոանց թիվը հասավ 15-ի, իսկ անցյալ ամառ մենք ունեմք արդեն 48 հրապարակ, մոտ 2600 յերեխաներով, վորոնց մեծ մասը գյուղացիների (չքավոր ու միջակ) յերեխաներ ելին:

Այս 48 հրապարակի պահպանությունը նստել ե 14—15 հազար ոուբի, մինչդեռ պատրաստի գումար նրանց միայն 4-5 հազար ոուբի յետրվել, մնացածը, մոտ 65-70 տոկոսը հոգացել են աեղերը—շրջութեամբները, կոռպերացիան, գվլրոցը, կին-բաժինը, բժշկակալանը և այն. իսկ զործով ողնել են և պատգամավորուհին, և գյուղատնտեսը և պիտները, և կուսրջիջն ու ԼԿՅԵԱ-ը:

Քանի զեռ ալսքան սուղ են մեր միջոց-

ները, թանի զեռ պակասում են շենքերն ու պիտույքները, հագուստն ու ոննդամթերքները, թանի զեռ բյուջեատին կարգով չեն ապահովվում մեր նախագպրացական հիմնարկները (հրապարակ, մանկապարտեզ) պետք ե զարկ տալ Տեղական սիցոցներին, սպասարձել տեղական ուժերն ու հնարավորությունները:

Տեսնենք՝ ինչ ե հարկավոր անել այժմյանից և ինչ կարող ե անել ինքը գեղջկուհին հրապարակների կազմակերպման գործում:

Մեզնում մի վատ սովորություն է արմատացել—գործը հետաձգել մինչև վերջին որերը ու շատ կերպով մի կերպ «յոլա տանել»։ Այդպիս չպիտի լինի. հրապարակների համար պետք է վայորով պատրասվել։

Ասցնում ե գարունը գյուղացին վազուց և գաշտ գուրս լեկել. կարճ ընդմիջումից հետո կակսվի մի ավելի լեռունը ան - ամառային աշխատանքների շրջանը, յերբ մեր գյուղացին զործի կլծվի և առավոտից իրիկուն կաշխատի իր ընտանիքով. ահա այս շրջանում նրան պետք է ազատել յերեխաներից, այս շրջանում պետք ե փոքրիկներին 100 տոկոսով ընդգրկել հրապարակում, վորը մինչ այդ պիտի պատրասվին։

Գործն սկսելու համար պետք է ունենալ.

1. Ղեկավարներ (վարժուհիներ),

2. Շենք և հարմար ու ընդարձակ հրապարակ (հողամաս)։

3. Պիտույքներ, գործիքներ, նյութեր.

4. Կահավորություն՝ խաղի, աշխատանքի, սննդի համար, ամանեղեն, զգեստ, խաղալիքներ և այլն։

Բացի դեկավարից (ու նրա վարձից՝ մասամբ) գյուղը կարող է ամբողջովին հոգալ այս կարիքները, յեթե որ առաջ մտածի այդ մասին։ Ամենից առաջ այս հարցը ձեռնարկելու յեն իրենք գեղջկուհիները, ոգնության հրավիրելով կինքաժնին, կոռպերացիալին, Լեթե՛՛, բժշկին, ուսուցչին և այլն։

Բավական ե սրանցից մեկի կամ գյուղառների լուսսեկցիալի միջոցով խորհրդակցության հրավիրել ու ընտրել «մանկական հրապարակի կազմակերպման հանձնաժողով»։ այդ հանձնաժողովը կմշակի իր աշխատանքի ծրագիրը և գործի կանցնի մոտավորապես հետեւյալ խնդիրների շուրջն աշխատելով։

1 Ընտրել հրապարակի տեղը, մաքրել այն ու կարգի բերել (հարթել, ափազ փռել և այլն)։

2 Բանակցել դպրոցի հետ շենքից ու գույքից ոգտվելու համար։

3. Զեռք բերել սեղաններ, աթոռներ, նստարաններ, ամանեղեն, սրբիչներ և այլն։

4. Հաշվի առնել զյուղի 3—7 տարեկան լեռխաններին, պարզելու համար՝ մոտավորապես քանիման և ովքեր են ընդունվելու։

5. Բանակցել ուսուցչի, բժշկի, գյուղատնտեսի, պիոներների հետ՝ ովքեր յեվ ինչ աշխատանիններ են վերցնելու իրենց վրա։

Ես բոլորն առանց խոշոր գժվարությունների կհաջողվի, յէթե հանձնաժողովն ազիտացիալի ու պրոպագանդակի միջոցով կարողանա հարկավոր արամազրություն ստեղծել և շահագրն գույլ բնակչությանը, գլխավորապես մալրերին—ու առ հասարակ—խորհրդ։ մարմիններին։

Մյուս պահմանն ե՝ նյութական ժողովական սեղմանը, վորպեսզի հնարավոր լինի ժամանակին հոգալ հարկավոր ծախսերը։ բացի ծնողներից, վորոնցից սաացվածը հետագալում մննդի (Ճաշ, նախաճաշ) վրա կծախսվի մեծ մասամբ, այս բանում մեծ ոգնության կզան նաև փոկը, կոռպերացիան, արտելները և այլ անտեսական ու հասարակական մարմիններ։

Զգետք ե առիթը բաց թողնել և ամեն անգամ գյուղի հասարակական ժողովներում (կոռպերատիվի, գյուղխորհրդի, փոկի անդամների) պետք ե հրահրել հրապարակի հարցը և գործնական առաջարկներ մտցնել։

Դյուղի կուլտուրական ուժերի միջոցու վ

պետք ե ոգտագործել նաև հասարակակալան ձեռ-
նաբարկությունները (հանդես, ներկայացում, տո-
ներ և այլն):

Այս բոլորի հետ զուգընթացաբար հանձնա-
ժողովն իր ծրագիրն ու հրապարակի նախահաշի-
վը ներկայացնում ե Լուսբաժնին ու շրջգործկո-
մին ի հաստատություն և մինչև զեկավարի դալը
(նշանակում ե լուսբաժնը) շարունակում ե
կազմակերպչական աշխատանքները:

Դեկավարի գալուց հետո սկսվում ե բուն
աշխատանքը յերեխաների հետ. Փոնդի մնացորդի
գործադրությունը, հետագա ուժեղացումը և այն
տանում ե զեկավարը՝ հանձնաժողովի կամ նրա-
պարակի նորընտիր խորհրդի հետ:

Հրապարակի բացվելով զյուլը թեվակր-
իում ե մի նոր ցցան. գեղջկուհին հանդիսատ իր
աշխատանքներին ե նվիրվում, իսկ այնտեղ, հո-
գասուն այդում, առվի յեզերքին կամ դպրոցի
բակում մանուկներն ուրախ թռչկոտում են ու
աշխատում, և ավելի հարուստ կյանքով, ավելի
քիչ զրկանքներով աճում ե մի նոր, առողջ,
գործունյա սերունդ:

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՃՐԱՊԱՐԱԿԸ

Խորհրդային Միության մեջ նկատելի կեր-
պով իջնում ե յերեխաների մահացության տո-
կուր. յեթե մենք վերցնենք յերեխաների մահա-
ցությունը Յեվրոպակի մայրաքաղաքներում, կհա-
մոզվենք այդ բանում: Մոսկվայում 1913 թվին
100 ծնունդին ընկնում եր 26 մահացություն,
մինչդեռ 1926 թվին մահացությունն ընկալվ
մինչև $13^0/0$, այսինքն կիսով չափ պակասեց:
Յեթե 1912 թվին մահացությունը համարենք
 $100^0/0$ և համեմատենք 1926 թ. հետ յեվրոպա-
կան մայրաքաղաքներում 1926 թվին յերեխանե-
րի մահացության հետևյալ պատկերը կտեսնենք.

Ոսլո (Նորվեգիա) $45, 4^0/0$

Մոսկվա (ԽՍՀՄ) $46, 5$

Բերլին (Գերմանիա) $58, 4$

Լոնդոն (Անգլիա) $68, 1$

Փարիզ (Ֆրանսիա) $89, 3$

Վարշավա (Լեհաս.) $93, 9$

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր յերե-
խաների մահացությունը ԽՍՀՄ մայրաքաղաքում
շատ ավելի պակաս ե, քան յեվրոպական մյուս
մայրաքաղաքներում (բացի Նորվեգիակից):


Ավելի համոզեցուցիչ որինակ. 1912 թ.
մանուկների մահացությունը Մոսկվայում 70
տոկոսով բարձր եր Վարշավակալից, մինչդեռ 1926
թ. Մոսկվան տաղիս ե Վարշավակալից 13 տոկոս
պակաս մահացություն. Լենինգրադի բանվորա-
կան թաղաժամասերում մինչև հեղափոխությունը
15—16 տոկոսով ավելի յեն յերեխաներ մեռնում,
քան կենտրոնում, ուր ապրում եին արիստո-
կրատը (ազանով) տարրերը:

Այս տվյալներն ապացուցում են, վոր նախ՝
պրոլետար յերեխան բուրժուական հասարակա-
կարգում ավելի յենթակա մահացության և՝ յերկ-
րորդ՝ Խ. հասարակակարգում հետզհետեւ վերա-
նում են յերեխաների մահացության նպաստող
պայմաններ:

Հեղափոխությունը, զրկելով արտօնյալ դա-
սերին շքեղությունից ու շռայությունից, տար-
րական հարմարություններ ստեղծեց քաղաքի ու
գյուղի չքավոր աշխատավորության համար. շատ
տեղերում նախկին պալատներն ու հոյակալ
տները վերածվեցին մասնկական հիմնարկների.
Խ. Միության ամեն մի քաղաքում այժմ կան
առանձիններով գլորցներ, ակումբներ, մանկա-
պարտեզներ, կան մառներ ու կոնսուլտացիա:
Յերեանը, վոր համեմատաբար փոքր քաղաք ե,
այժմ ունի 18-19 մանկապարտեզ, մինչդեռ հե-

դափոխությունից առաջ այսպիսի հիմնարկներ
գոյություն չունելին, յեղածներն ել շատ անկազ-
մակերպ ու կարճատես ելին լինում. Լենինականը,
բացի քաղաքի ու յերկաթղթիցի հիմնարկներից,
այժմ զործարանային մասում հատուկ մանկա-
պարտեզ ու մսուր ունի մանագործարանի բան-
վորների յերեխաների համար. Պետք ե տեսնել,
թե ինչպիսի սիրով բանվորուհիները յերեխա-
ներին մսուր են բերում, հանձննում քուրերի ու
դաստիարակների խնամքին և հանգիստ սրտով
զնում զործարան՝ աշխատանքի: Յերեխան այն-
տեղ խաղում ե հատուկ սենյակում («խաղասեն-
յակ»), հսկողության տակ, զբունում ե, յեր-
գում—խսում, սովորում ե կանոնավոր ուտել.
Փոքրիկներին լողացնում են, քնեցնում. բոլորը
մսուր գալիս փոխում են իրենց զգեստները. մի
խոսքով յերեխան այս պայմաններում անձանա-
չելի լե դառնում:

Վատ ե սակայն, վոր՝ զիշերալին հերթ չի-
նելու պատճառով ծնողներն ստիպված են լի-
նում զիշերը, ժ. 11-12 ին տուն տանել իրենց
փոքրիկներին, մյուս որը՝ աշխատանքի հերթին՝
նորից բերելու համար:

Ավելի մեծերի համար (3.8 մ.) ՀԵԿՆԵՐԻ
հետաքրքիր ե մանկապարտեզում. 
փում են զործարանի բանվորների ու աշխատա-
պարտեզների հավաքում:

Ավելի համոզեցուցիչ որինակ. 1912 թ.
մանուկների մահացությունը Մոսկվայում 70
տոկոսով բարձր եր Վարշավակից, մինչդեռ 1926
թ. Մոսկվան տալիս է Վարշավակից 13 տոկոս
պակաս մահացություն. Լենինգրադի բանվորա-
կան թաղաժամաներում մինչև հեղափոխությունը
15—16 տոկոսով ավելի յէն յերեխաներ մեռնում,
քան կենտրոնում, ուր ապրում եին արիստո-
կրատը (ազանով) տարրերը:


Այս տվյալներն ապացուցում են, վոր նախ՝
պրոլետար յերեխան բուրժուական հասարակա-
կարգում ավելի յէն յենթակա մահացության և՝ յերկ-
ըորդ՝ Խ. հասարակակարգում հետզհետեւ վերա-
նում են յերեխաների մահացության նպաստող
պայմաններ:

Հեղափոխությունը, զբկելով արտօնյալ դա-
սերին շքեղությունից ու շռայությունից, տար-
րական հարմարություններ ստեղծեց քաղաքի ու
զյուղի չքավոր աշխատավորության համար. շատ
տեղերում նախկին պալատներն ու հոյակապ
տները վերածվեցին մանկական հիմնարկների.
Խ. Միության ամեն մի քաղաքում այժմ կան
ասմենակներով գպրոցներ, ակումբներ, մանկա-
պարտեզներ, կան մսուրներ ու կոնսուլտացիա:
Յերեանը, վոր համեմատաբար փոքր քաղաք ե,
այժմ ունի 18-19 մանկապարտեզ, մինչդեռ հե-

դափոխությունից առաջ այսպիսի հիմնարկներ
գոյություն չունելին, յեղածներն ել շատ մանկազ-
մակերպ ու կարճատե ելին լինում: Լենինականը,
բացի քաղաքի ու յերկաթ-գծի հիմնարկներից,
այժմ գործարանային մասում հատուկ մանկա-
պարտեզ ու մսուր ունի մանագործարանի բան-
վորների յերեխաների համար: Պետք ե տեսնել,
թե ինչպիսի սիրով բան վորուհիները յերեխա-
ներին մսուր են բերում, հանձնում քուլքերի ու
դաստիարակների խնամքին և հանգիստ սրտով
վնում գործարան՝ աշխատանքի: Յերեխան այն-
տեղ խաղում ե հատուկ սենյակում («խաղասեն-
յակ»), հսկողության տակ, զբոսնում ե, յեր-
գում—խոսում, սովորում ե կանոնավոր ուտել.
փոքրիկներին լրացնում են, քնեցնում. բոլորը՝
մսուր զալիս փոխում են իրենց զգեստները, մի
խոսքով յերեխան այս պայմաններում անձանա-
չելի յէ դառնում:

Վատ ե սակայն, վոր՝ զիշերավին հերթ չի-
նելու պատճառով՝ ծնողներն ստիպված են լի-
նում զիշերը, ժ. 11-12 ին տուն տանել իրենց
փոքրիկներին, մյուս որև՝ աշխատանքի հերթին՝
նորից բերելու համար:

Ավելի մեծերի համար (3-8 ա.) Հենինքներն
հետաքրքիր ե մանկապարտեզում, ուր հավաք-
վում են գործարանի բանվորների ու աշխատա-
պահների մասնակիցները:



վորների յերեխաները. այժմ ել, չնայած այն հանգամանքին, վոր յերեխաները միայն 6 ժամ են մնում մանկապարտեզում, շատ զգալի յե ծնողների համար այս թեթևությունը. իսկ յերը մանկապարտեզն իր նորմալ (գործարանային մանկապարտեզի) պատկերը կատանա, այն ժամանակ ևս ծնողները բոլորովին կազատվեն յերեխաների հոգսից ու հանգիստ կնվիրվեն իրենց գործին, վորից կշահվի թե գործարանը, թե իրենց ծնողների աշխատանքն ավելի արդիունավետ կլինի և թե ընտանիքում ավելի անդորը ու վայելուչ կյանք կստեղծվի: Ազատվելով ընտանեկան հոգսերից, բանվորուհին սիրով կնվիրվի ինքնազարդացման ու հասարակական աշխատանքներին, կհաճախի գործարկումի, կուտհանձնաժողովի նիստերին, պատգամավորական ժողովներին, ակումբ, կինո և այլն:

Թե կուսակցության և թե պրոֆմիությունների համագումարներում հաճախ են շեշտվել այն միջոցների մասին, վորոնք բարձրացնում են բանվորուհու կուլտուրական մակարդակը, կանոնավորում են նրա աշխատանքը ու նպաստում կենցաղի բարելավման: Այդ խնդիրը նորից մի անգամ հարուցեց համամիութենական կոմմունիս. կուսակցության XV համագումարը, շեշտելով կուլտուրական աշխատանքի անհրաժեշտությունը,

վորի մասին «վոչ թե պետք ե միայն խռոել ու լավ վորոշումնել հանել, այլ անհապաղ պետք ե վերաբաշխել տեղական և պետական միջոցները հոգութ կուլտուրական շինարարության» (XV համագ. ընկ. Մոլոտովի զեկուցումից). բանվորուհու ազատազրման նպաստող ու նրա կենցաղը բարելավող միջոցների մեջ առաջնակարգ տեղն են բոնում մանկական հիմնարկները, վորոնք հարմարեցվում են բանվորուհու ցերեկվա աշխատանքներին ու գիշերվա զբաղմունքներին: Նախադպրոցական տարիքի (3-7) յերեխաների համար ցերեկվա հիմնարկներն են՝ մանկապատեզն ու մանկական նրապարակը, վոր մեծ մասամբ ամառային ամիսներին ե գործում, այնունետեւ վերածվելով մանկապարտեզի կամ փակ հրապարակի:

Գիշերային հիմնարկներն են՝ ակումբներին կից մանկական սենյակները, ուր թողնում են ծնողներն իրենց փոքրահասակ յերեխաներին և իրենք կամ աշխատանքի յեն գնում (գիշերային հերթը գործարանում) կամ զբաղվում են ակումբներում, ժողովների յեն գնում կամ զանազան հանդիսավարեր են այցելում (թատրոն, կինո), որվա աշխատանքից հետո թարմանալով և հանգըստանալով: Ակումբն ունի իր գաստիբարակշունչներին, վոր մեծ մասամբ հսկում ե յերեխապին՝ քնելիս, իսկ յերբեմն ել զբաղեցնում ե նրան:

Բոլորիս համար պարզ ե, վոր նյութական սուղ միջոցների շնորհիվ պետությունը չի կարող ներկայումս ապահովել նույնիսկ ցերեկը գործող հիմնարկների պահպանությունը. ել ուր մնաց գիշերալին սենյակները, վորոնց հոգն ու պահպանությունն ընկնում ե ամբողջովին ակումբների և իրենց բանվորուհիների վրա, վորոնք ամենից շատ շահագրգոված են այդպիսի հիմնարկներ ունենալու գործում:

Դժբախտաբար մեր ակումբներն ու բանվորուհիները դեռևս լավ չեն զիտակցում այդ հիմնարկների կարեւորությունը: Հին հասկացողությունը գեռ ուժեղ ե շատերի մեջ, վոր, իրրթե, յերեխալին պետք ե դաստիարակել միայն գպրոցում, իսկ նախադպրոցական հիմնարկը շատ-շատ միայն մոր բեռը կթեթևացնի: Մինչդեռ շատ կարեոր ե իմանալ և այն, վոր հենց նախադպրոցական տարիներում ե կազմակերպվում յերեխայի բնավորությունը, այդ շրջանում ե յերեխան ձեսկերպվում թե ֆիզիքապես, թե հոգեպես և այդ շրջանի տպավորություններն ու պայմաններն անջնջելի հետք են թողնում մանկան մատադ որդանիզմի վրա:

Ահա այս գիտակցության բերելու համար անհրաժեշտ ե թե լուսորդանների, թե կինբաժիների ազիտացիան և թե իրենց բանվորու-

հիների ունբանց կազմակերպությունների գործնական, կոլեկտիվ աջակցությունը:

Մանկհրապարակների կազմակերպման գործում բանվորուհին կարող ե շահագրգուել և գործարկումին, և կոռպերատիվը, և պրոֆմիությունները. նա կարող ե մեծ աջակցություն ցույց տալ հրապարակների կազմակերպման ու պահպանության միջոցներ ձեռք բերելու գործում, նպաստել վոր շենք ու հրապարակ տրամադրվի, կարգի բերվի այն, կահավորվի և այն:

Այդպիսի ընդհանուր ու տեսկան հետաքրքրությունը կարող ե ազդել և այն հանգամանքի վրա, վոր վերջիվերջո հրապարակների պահպանությունն ապահովվի տեղական բյուջեներով:

Մեր յերկու տարվա փորձը լավ առացուց ե, վոր աշխատավոր մասսաների այս պահանջն ու ցանկությունն այնքան ել դժվար չի իրականացնել, ինչքան ել սուլ են միջոցները, ինչքան ել շենքերի նեղվածքությունն զգալի յե. Յերեվանում, որինակ, վերջին տարիներս կար միայն 3-4 մանկադպրոտեզ, մինչդեռ ահա 2 տարի յե դրանց կողքին գործում են 10-12 նոր, պրոֆմիութենական մանկապարտեզներ, վորոնք պատըսպարվել են միութենական ակումբներում, ոգտվում են շենքերից, գուլքից, մասամբ ել 0/0-ային, հատկացումներից. կան այնպիսիներ

ել, վոր պահվում են քացառապես ծնողներից գանձված միջոցներով։ Կյանքն՝ ինքն և հարկադրում միջոցներ ստեղծել, հարմարեցնել. բավական ե, յեթե զեկավար որդանները կազմակերպեն գործը և աշխատավոր մասսաների ակտիվությունն ու նախաձեռնությունն ոգտագործեն։

Շատ ցանկալի կիներ, վոր ամառային հրապարակների կազմակերպման ձեռնարկեն առաջին հերթին մեր քաղաքների բանվորական կազմակերպությունները՝ գործարկումները, պրոֆմիությունները, կոռպերացիան և այլն։ Մեր քիչ թե շատ խոշոր արդյունաբերական ձեռնարկները (Զեթ-ոճառ գործարան, բամբակկոմ, արտելներ, գյուղկոոպ և այլն) իրենց շուրջն այնքան բանվորներ են համախմբել, վոր կարիք կա հատուկ մանկ. հիմնարկներ կազմակերպելու, մանավանդ յեթե բանվորներն ապրում են գործարանի շրջանում։

Գործի կազմակերպությունը հեշտացնելու համար ավելորդ չենք համարում մի քանի տեղեկություններ ու նրանանգներ տալ.

ՀՐԱՀԱՆՔ

1. Հրապարակը կազմակերպվում ե գարնան (վերջերին) ու տեսում ամբողջ ամառը՝ 4-5 աշմաւ։

2. Հրապարակը կազմակերպելիս պետք ե լինկատի ունենալ տվյալ վայրի կիլոմետրան պայմանները, շենքի հարմարությունը, աղատ ու ստվերու հողամաս (ծառածածկ, ցանկապատած, ծածկերով և այլն), խուսափելով ցած, խոնավ տեղերից ու փոշոտ փողոցներից։

3. Ոգտագործել քաղաքի այգիները, պուրակները, ընդարձակ ու մաքուր բակերը։

4. Շենքը կամ ծածկը (հաւես, պատշգամբ և այլն) անհրաժեշտ ե վատ յեղանակներին պատապարվելու համար. կարելի յե ոգտագործել դպրոցի, մանկապարտեզի, ակումբի շենքերը, յեթե ունեն հարմարություններ։

ՑԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

5. Հրապարակը հիմնվում ե վոչ ավելի 60 յերեխալի համար (3-8 տ.), նախապես ուսումնասիրելով ուսունի բնակչության և ցուցակագրելով ընդունվող յերեխաներին։

6. Ցուցակագրվածների վերջնական ընդունելությունը կատարում ե առանձին հանձնամոլով, հիմնարկ—ձեռնարկի, պրոֆմիության, կին-բաժնի, լուսբաժնի ներկայացուցիչներից կազմված։

7. Ցերեխաներն ընդունվում են բժշկական բնուրյունից նետ։

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՆԵՐԲԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

8. Պարապմունքների ժամերն ու տեսպությունը կախված է տվյալ ուսունի բնակչության աշխատանքների բնույթից ու պայմաններից:

9. Հրապարակում 8-9 ժամիա պարապմունքներ սահմանելու գեղքում 2 խմբակի (60 յերեխա) համար հրավիրվում ե 3 զեկապար, յուրաքանչյուրը 5-6 ժամվա աշխատանքի հաշվով. այսպիսի լրիվ հրապարակի համար անհրաժեշտ ենակ բժիշկ յեվ Տեխնիկ. աշխատավոր. հարկ յեղած գեղքում ոգնության են հրավիրվում նաև կոմիտատական աղջիկներ, պիոներներ, ձեռնահաս պատգամավորուհիներ և այլն:

10. Հրապարակին կից կազմակերպվում են հրապարակի խորհուրդը, վարի կազմն ու պարտականությունները նախառեսնված են հատուկ հրահանգով:

11. Հրապարակն անպայման ապահովելու յև յերիխաներին սննդով, 5 ժամից ավելի մնալու գեղքում առնվազն 2 անգամ (թել և տար նախաճաշ, կամ նախաճաշ և ձաշ). աննդամթերքների ընտրությունն ու կերակրացույցի կազմելու կատարվում է բժեկի մասնակցությամբ,

ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Կահույք. սեղաններ, նստարաններ կամ աթոռակներ, լվաց սրան, սրբիչներ, ջրի կաթսա (բակ), գույլ, թաս, գարակներ, բաժակներ, պնակներ, գգալներ:

բ) Նյուրել. ավազ, կավ, գունավոր և հասարակ մատիտներ կամ կավիճներ, ներկեր, սոսովնձ, թել, թուղթ, սերմեր, վրձիններ, մեխ, տախտակ, ձողեր, կտորեղեն և այլն:

գ) Գործիքներ պիտույքներ, մուրճեր, մկրատներ, բահեր, փոցիսեր, ջրցիրներ, սղոց, սալակներ, պատգարակներ (նասիլկա), ավագի սեղան, կավի արկղ և այլն:

դ) Խալալիքներ. ձիաձող, սանձ, ավագի ձեռեր, թոկ (թոչկոտելու), գնդակներ, զանգակներ, թմբուկ, փող, կառքեր, կառուցող. նյութ (մեծ չափերի), տիկնիկներ (պիոներ, բանվորուհի, գեղջկուհի), ձլորդի, ցանցեր, դիմակներ, գործիքներ և այլն:

Պետք ե աշխատել ըստ հասրավորության եժան կահավորել հրապարակը. վերև թված պիտույքներից շատ բան կարելի յև վեցցնել զանազան հիմնարկներից՝ զպրոցից, գործարկութից, ակումբներից, կոռպերատիվից՝ թեկուղ և ժամանակավորապես ոգտագործելու նպատակով. շատ բան

կարելի յե շինել սեփական միջոցներով, պիտ
ներների, ծնողների ոգնությամբ պիտույքների,
նութերի ու ամանեղենի վորոշ մասը կարելի յե
ծնողներից ձեռք բերել:

Հրապարակն եժանագին հիմնարկ ե, վոր
հարավոր և հետզետե բարեկարգել ու հարս-
տացնել, յերբ նա իր գոյությունը կարգարացնի
ու ամուր կերպով կկապվի մեր նոր կենցաղի
հետ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՆԱԽԱԶԱՇԻՎ

40 յերեխա, 3 ամսվա ընթացքում

Հե. Հե	Ա.Բ.Ա.ՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Արժեքն ըստ հատ- կությունների	Արժեքն ըստ հատ- կությունների				ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐ ՎԱՐՄԵԼԻՑ Կարելի յե ձեռք բերել
			Քանակ	Սովորություն կանոնական	Պրեմիում արժեք	Արժեքն ըստ անհամարժեած գույքի	
	ԿԱՀԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ						Առաջանիշների (*)
1	Մեղաններ 10 տեղանի .	4	32 ռ.	20 ռ.	20 ռ.		Վերաբերյալ
2	Աթուններ կամ նստարաններ	40	60 ¹⁾	20 ¹⁾	15 ¹⁾	15*	4 նստար., 8 տարուր,
3	Պահարաններ	5	20 ¹⁾	15 ¹⁾	20	10*	1 հատ
4	Դարակներ	4	12	8	4*	2 հատ	
5	Կախարան	2	10	5	—*	Հանարակ մեխեր	
6	Լվացարան և թաս . .	2	10	8	4*	1 հատ	
7	Նութերի արկղ	1	3	2	—*	Խնդրել մեկից	
8	Տարուրեալ մեծերի համար	2	2	2	—*	»	
9	Ջրի տակառ	1	10	5	5		
10	*) Ինքայեն կամ կոր .	1	15	7	7*	Կուր	
11	Գույլեր	2	5	3	3		
12	*) Բաժակներ	40	12	8	4*	Թիթեղից	
13	Ափաններ	20	6	4	2*	Միայն 10 հատ	
14	Փղաններ	40	8	4	4*	Թեյի կամ ճաշի	
15	Կափի արկղ	1	2	1	1*	Խնդրել մեկից	
16	Գողնոցներ	40	20	12*	—	Ջրի կարել տալ	
17	Արքիչներ	10	5	5	—*	Բերել տներից	
18	Խողանակ (կամ ավելներ)		3	3	—*	»	
	ՆՅՈՒԹԵՐ և ՊԻՏՈՒՅՔՆԵՐ.						
19	Մկրատներ	4	2		—*	»	
20	Մուրճներ	3	1 50		1 50		
21	Սղոցներ	2	3		3		
22	Վրձիններ	40	4		4		
23	Մեխեր	1 կ.	2		2		
24	Ներկեր	40	2		2		
25	Թուղթ սպիտակ (մեծ)	1/2 սո.	4		4		

1) Այս ծախսերն ընդհանուր գումարների մեջ չեն մտնում:

№ №	ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԻ	ՔԱՆԱԿԸ	ԱՐԺԵՔՆ ԸՍՄ ՀԱՄ- ԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ			ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
			Սովորական կանչ	Պրիմի- տիվ	Ամենաքած- ուրած	
26	Թուզթ փաթաթելու	100 թ.	2	—	2*	Փափախություններ, գործեղից կարելի յե ձեռք բերել
27	Կարսոն	20	4	—	—	
28	Զրցիկներ	5	5	2*	2 հատ	
29	Փացիկներ	10	5	—	—	Զենք բերել ձրի
30	Սալլակներ	5	4	—	—	» » »
31	Կալ	1 փ.	—*	—	—	Գտնել տեղում
32	Մատիտներ	5	—	—	3*	4 դրամ ժին
33	Ավագ	½ լի. ս. 7 դրամ. ժ.	—	—	—*	Զենք բերել տեղում
34	Գնդակներ	4	4	—	2*	2 հատ
35	Թմրուկներ	2	2	—	2	
36	Ավագի պիտ. (Ճիկ)	2 լիոնդ.	3	—	3	
37	Սանձեր	4	—	—*	—*	Ճինել տեղում =
38	Ողակներ	4	—	—*	—*	Զենք բեր, տեղում
39	Զանազան խաղալիքներ	5	—	—	—	Ճինել տեղում
40	Բաներ	10	—	—	—	
41	Սերմեր	—	—	—	—	Զենք բեր, տեղում
42	Կառուցող հյութեր	10	—	—	—	
34	Մանկական և մանկավ. գրականութ.	10	—	10	—	
		267,50	157,50	119,50		

№ 2. ԿՐԱՊԱՐԱԿԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

(Ընդհանուր ծախո)

Հիմ- նարկների կատեգորիան	Կահավո- րություն	Նյութեր, պիտույք՝ ներ	Պերսոնալ	Գումար
Սովորական	190	77—50	225	492 ռ. 50 կ.
Պրիմիտիվ	117	40—50	120	277 ռ. 50 կ.
Ամենաանհրա- ժեշտ ծախսեր	79	40—50	105	224 ռ. 50 կ.

Ծանոթություններ. — Անդի ծախսը նախահաշվի մեջ
չի մտնում:


Մանր. մունք ծախսերը ի նկատի չեն առնվել (թել,
ասեղ, ստպոն և այլն):

Պերսոնալ հաշված և սովորական հրապարակում՝ 1 վա-
րիչ և 1 ղեկավար, պրիմիտիվ հրապարակում՝ 1 վարիչ-ղե-
կավար, ծալրահեղ ղեղքում՝ միայն մի ղեկավար: Վարիչի
ամսական ոռճիկը հաշված է 40 ռ., ղեղքավարին՝ 35 ռ.

Մեկ խմբակում հաշվել 30 յերեխա, յերկուսում՝ 60.

Աշխատավարձը հաշված է 3 ամսվա համար:

№ 3 ԱՍՏՐԱԽԱՆ ՀՐԱՄԱՐՄԻ ՀԱՏԱԿԱԳԻՒԾԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ

× Ծառեր.

Ճ. Ճանապարհներ.

Ձ. Ձաշի հրապարակ.

Փ. Փոքը »

Ջ. Ջրի ավազան.

Ս. Սենյակներ՝ լեռնեխաների և տեխնիքական աշխատավորի համար, խոհանոց, պատշգամբ.

Ա. Ավազի կամ կավի սեղան (տաշտ, արկղ).

Կ. Կենդանիների և թռչուների տեղ.

Ծ. Ծաղկանոց.

Բ. Բանջարանոց.

Ջ. Ջրաքնոց.

Բ. Բլումկ.

Ա. Ալկի, զրուցարան (ձածկ, ծառեր).

Մաճոքություն.—Տրված ե մշտական հրապարակի հատակագիծը, նոր բացվող հրապարակը միայն կարող ե նախատեսնել այս պահանջները և մոտավոր կերպով դասավորվել, ձգտելով հետզհետե մոտենալ այս զրության:

№ 4. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԱԳՐՈՒՄԸ

1.	Անունը, ազգը	ի ամառ, հրապարակ, 192 թ., №.....
2.	Տարիքը (յերբ և ծնվել)	
3.	Հասցեն	
4.	Ծնողների զբաղմունքը	
5.	Ընտանիքի լեկամուռը (սոճիկ, անտեսություն)	սոճիկ սուրբ ամսակ տըն- տես. — չքա- փոր, սիջակ ունեոր
6.	Ուժ խնամքին և մնում յերեխան, յերբ ծը- նողներն աշխ. են գնում	
7.	Քանի յերեխա կա ընտանիքում 2—7 տա- րեկան	
8.	Ֆիզիքական ինչ արատներ ունի	
9.	Վերջին ամիսը հիվանդացել և և ինչով	
10.	Բնակարանային պայմանները	
11.	Ածական ինչքան կարող են վճարել ծնող- ները հրապարակին	

Դյուդեյակի նախագահ՝

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը

192 թ. « » ի

գյուղ

№ 5. ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՄՈՏԱՎՈՐ ՈՐԱԿԱՐԳԸ

Ժամերը	Քաղաքում	Հրապարակում	Ովքեր կարող են դե- լավարին ոգնել
9—7	8—9	Յ լեխանիքի գալն ու զգեստավորվելը	
7—8	9—9 $\frac{1}{2}$	Լվացվելը, վուները լվանալը, խաղեր	Հերթապահ մայրերը, քույրերը և այլն.
8—9 $\frac{1}{2}$	9 $\frac{1}{2}$ —11	Զրույց, պատմվածք, յերգ, քայլերթ	Պիոներներն ու Կ. Յերիտականները
Բնդմիջումով			
9 $\frac{1}{2}$ —10	11—11 $\frac{1}{2}$	Նախաճաշ	Հերթապահ ծնողները, պատգամավոր, և այլն
10—11	11 $\frac{1}{2}$ —1	Բացըթյա խաղեր, հանգիստ, զրույցը	Պիոներները
11—12	1—2	Զեսարվեստ նկարչություն	
12—12 $\frac{1}{2}$	2—2 $\frac{1}{2}$	Ճաշ կտմ յերկրորդ նախաճաշ	Ճամանակ
12 $\frac{1}{2}$ —1	2 $\frac{1}{2}$ —3	Լվացվելը, հագնվելը և տները ցրվելը	Ծնողները կամ հերթապահները


Այստեղ պարապմունքները հաշված են որական 7 ժամ. ավելի կամ պակաս տևելու դեպքում պարապմունքների կարգն ու տեղողոթյունը փոփոխության և յենթարկվում,

Ոգտվել նաև Մ. Դուրգաբյանի. «Ինչ և մանկական հրապարակը» զրքույկից, վորտեղ բացի այս խընդիրներից բերված են նաև.

1. Ղեկավարի և հրապարակի հաշվետվության ձեռը.

2. Հրապարակի ծախսերի ցուցակը:


Մանկական հրապարակների մասին հայերեն կան նաև հոդվածներ՝ «Ժողովրդ. լուսավորություն» ամսագրում 1926 թ. № 5—6, 1927 թ. № 4 և № 11.



ՑԱՆԿ

հջ

1. Գեղջկուհին և մանկապարակը գլուղում	3
2. Բանվորուհին և քաղաքի մանկապարակը	15
3. Հրահանգ հրապարակը կազմակերպելու մասին	23
Հավելվածներ	
I. Հրապարակի նախահաշվելը	27
II Նախահաշվի ամփոփումը	29
III Հրապարակի հատակագիծը	30
IV Յերեխաների նախնական ցուցակա- գրումը	32
V Մանկական հրապարակի որակարգը	33
VI Սսնդի նորմաները	34
VII Շաբաթական մենյու	35



ՀՀ Ազգային գրադարան



NL0228821

50. 708

ԳԻՒԾ 12 ԿՈՊ.

